ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ (Կ-032[2]-28.02.2019-ՊԻ-011/0, Կ-032[7]-28.02.2019-ՊԻ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունները ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	*Արթուր Դավթյան*	Հոդված 1.	«Բնակչության պետական ռեգիստրի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածով օրենքի 6-րդ հոդվածում լրացվող նոր 3-րդ մասից հանել «կառավարման» բառը:	Ընդունվել է: Օրինագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
2.	*Վլադիմիր Վարդանյան*	Հոդված 1.	«Ոստիկանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածով լրացվող նոր 3.1-ին հոդվածի 3-րդ մասը հանել:	Ընդունվել է: Օրենքում լրացվող 3.1. հոդվածի 3-րդ մասը հանվել է:	Ընդունվել է:
3.	*Արթուր Դավթյան* *ՀՀ կառավարություն*	Հոդված 2.	«Ոստիկանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածում առաջարկվում է «մարդու ազատությունների սահմանափակումից բխող» բառերը փոխարինել «մարդու՝ ազատությունից զրկման հետ կապված» բառերով:	Ընդունվել է : Նախագծի 2-րդ հոդվածում «մարդու ազատությունների սահմանափակումից բխող» բառերը փոխարինվել են «մարդու՝ ազատությունից զրկման հետ կապված» բառերով:	Ընդունվել է: